

Նվիրում եմ գիրքի եղբորս՝

ԱՇՈՏ ՎԱՐԱՋԴԱՏԻ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ՏԻՆԱՏԱԿԻԵ

ԿՈՐՅՈՒՆ ԹԵ՛ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ:
ԲՆԱԳՐԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ա. Վ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

«Ագաթանգեղեայ պատմութիւն» և «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայայ Վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին»¹—V դ. հայ մատենագրութեան այս երկու նշանավոր երկերը բանասիրութեան մեջ հաճախ են հիշվում կողք-կողքի ոչ միայն այն պատճառով, որ արտացոլում են հայ ժողովրդի պատմական կենսագրութեան համար դարակազմիկ և հոգեփոխիչ երկու այնպիսի իրադարձութիւն, ինչպիսիք են քրիստոնեւթեան մուտքը Հայաստան IV դ. սկզբին՝ Գրիգոր Լուսավորչի ձեռքով և հայ գրերի ստեղծումը V դ. սկզբին՝ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով, այլ որ, դրանից զատ, նրանք միահյուսված են իրար հետ բազմաթիւ, բառացի կրկնվող, նույնաբան հատվածներով, որոնք միասին վերցրած ստեղծում են այդ երկու երկերի համար մի յուրատեսակ ընդհանուր բնագրական հենք։ Սկսած հատկապես գերմանացի արևելագետ Արթրեդ Գուտշմիդից², հայ և օտար հայագետները միահամուռ այդ նույնաբան հատվածների սկզբնաղբյուր են համարում Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն և դրանք Կորյունին են վերագրում սոսկ այն հիման վրա, որ այդ հատվածներն ավելի հարմար են գալիս Մաշտոցի վարքին, ավելի լավ են կապակցված նախորդ և հաջորդ մասերի հետ—չափանիշ, որ նույնքան հաջող կարող է ծառայել հակառակ տեսակետը հիմնավորելու համար։

Այս հիման վրա էլ բանասիրութիւնը որոշում է երկու նշանավոր երկերի գրութեան ժամանակը—Կորյունինը՝ 440-ական թվերին, իսկ նրանից օգտված Ագաթանգեղոսի Պատմութիւնը՝ V դ. երկրորդ կեսին։

«Ագաթանգեղոսի Հայոց պատմութիւնը և հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը» ուսումնասիրութեամբ³ արդեն ցույց են տվել, որ Ագաթանգեղոսի Պատմութիւնը պետք է գրված լինի ոչ թե V դ. երկրորդ կեսին, ինչպես ընդունված է հայագիտութեան մեջ, այլ 431 թ. Յփեսոսի տիեզերական ժողովից առաջ։

Այդ հրապարակումից շատ ավելի առաջ մենք նույն եզրակացութեանն էինք հանգել «Կորյուն թե՛ Ագաթանգեղոս» ծավալուն անտիպ ուսումնասիրութեան մեջ՝ երկու երկերի բնագրական աղբյուր քննելու ճանապարհով։ Վերջին աշխատութիւնից մի ընդարձակ հատված հրապարակվեց ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» պարբերաթերթում⁴, որտեղ բանասիրութեան մեջ առաջին անգամ Կորյունի և Ագաթանգեղոսի բնագրական փոխառնչութեան հարցը դիտարկվում է բոլորովին նոր տեսանկյունից՝ Ագաթանգեղոսի Առաջաբանի (§§ 1—17) և բուն Պատմութեան աղբյուրի լուսաբանման հիման վրա։

Բնագրերի բաղդատումը կրկին հաստատում է մեր նախկին եզրակացութիւնը, որ Ագաթանգեղոսի Պատմութիւնն է Կորյունի մոտ նկատված

¹ Այսուհետե՛ «Վարք Մաշտոցի»

² Alfred von Gutschmid, Agathangelos, Leipzig, 1877.

³ ՀՍՍՀ ԳԱ Հրաբեր հասարակական գիտութիւնների, Երևան, 1987, № 4, էջ 82—84։

⁴ ՀՀ ԳԱԱ Գիտութիւն, 16 մարտի, 25 մարտի, 11 ապրիլի 1986 թ.։

բազմաթիվ նույնաբան հատվածների իրական սկզբնաղբյուրը: Հասկանալի է, այս նոր եզրակացությունը Կորյունի և Ագաթանգեղոսի բնագրական աղբյուրությունների վերաբերյալ՝ լուրջ հակասության մեջ է մտնում: Բոլոր այն հետազոտողների տեսակետի հետ, որոնք Ագաթանգեղոսին են համարում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի բանաբաղ: Ուստի հարկ ենք համարում ստորև բերել մեր բազմաթիվ ապացույցներից ևս մի քանիսը:

Կորյունյան հատվածներ Ագաթանգեղոսի Պատմության Գ գրքում.— Ագաթանգեղոսի Պատմության մեջ նկատված Կորյունյան հատվածների մեծ մասը բաժին է ընկնում «Դարձ փրկութեան» գրքին, և դա միանգամայն հասկանալի է: Քրիստոնեության տարածումը Հայաստանում Գրիգոր Լուսավորչի ձեռքով և հայոց, վրաց ու աղվանից գրքերի ստեղծումն ու տարածումը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով, մեհյանների ու քրմության կործանումը IV դ. սկզբին և պայթարը հեթանոսության մնացորդների դեմ դարավերջին, Ս. Գրիգորի վերադարձը Կեսարիայից՝ աստվածաշնորհ պարգևներով և Մաշտոցի վերադարձը Ասորիքից նորաստեղծ հայրենի նշանագրերով, Տրդատ թագավորի և Ս. Գրիգորի երթը Հռոմ և Մաշտոցին՝ Կոստանդնուպոլիս, Արիստակեսի վերադառնալը 325 թ. Նիկիայի եկեղեցական ժողովից և թարգմանիչների վերադառնալը 431 թ. Եփեսոսի եկեղեցական ժողովից և այլն,— այս բոլոր դրվագներն այնքան նման են իրար, որ, ինչպես հաճախ է պատահում ջատագովական գրվածքներում, դժվար չէր պատմական անձանց անունները փոխելով՝ մի լուսավորչի վարքի հատվածներն օգտագործել մյուս լուսավորչի վարքի համանման դրվագները ներկայացնելու համար:

Ստորև կքննենք բազմաթիվ բանաբաղումներից այնպիսի բացարձակ նույնական պարբերություններ, որոնց հեղինակի բացահայտումը կարող է առհասարակ անհնարին թվալ, նկատի առնելով դրանց զուտ կրոնաբարոգչական բնույթը:

Ա մ ե ն ա հ ե շ տ լ ու ծ Քրիստոսի

Ագաթ. § 787⁶

Կորյուն ԺԷ⁷

«Արքայն (Տրդատ) մեծասաստ իշխանութեամբ տայր հրաման՝ սատանայական և դիւմով ազգացն կողմանցն այնոցիկ՝ թափել և գերծանել յունայնավար հնացելոցն սնոտիագործ պաշտամանցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյ ծառայութեանն Քրիստոսի»:

«Դարձեալ առաւել ևս երկիւղածքն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ (Սրսվաղ) միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և դիւմով ազգին սաստիւ՝ թափել գերծանել յունայնավար հնացելոցն և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի»:

Ագաթանգեղոսի մոտ Ս. Գրիգորը և Տրդատ թագավորը գործի օգնությամբ հալածելով դեբրին (թրմերին)՝ կործանեցին Անահիտ և Նանե դիցուհիների մեհյանները Եկեղյաց գավառում, որից հետո «(Տրդատ) արքան մեծասաստ իշխանութեամբ հրաման տվեց այն կողմերի սատանայակուր և դիւմով ազգերին՝ թոթափել ու ազատվել ունայն, հնացած սնոտիապաշտությունից և հնազանդ լինել Քրիստոսի ծառայության ամենահաճելի լծին»:

Ագաթանգեղոսին հար և նման Կորյունը պատմում է՝ երբ Մաշտոցն Աղվանքում ուսուցանում էր մանուկներին իր նորաստեղծ դպրության արվեստը,

⁶ Ագաթանգեղոսի Պատմության Գ գրքի 787-րդ հոդված, աշխատասիրութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:

⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածքներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:

⁸ Ագաթանգեղոսի Վարք Մաշտոցի, աշխատասիրութեամբ Գ. Տեր-Մկրտչյանի, Երևան, 1977, էջ 123—124:

Աղվանքի աստվածավախ Արսվազ(են) արքան ավելի ևս հավատարիմ հոգացողությամբ սաստիկ հրաման տվեց (և Կորյունը շարունակում է Ազաթանգեղոսի նման նույն բառերով մինչև) հեագանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի:

Այստեղ Ազաթանգեղոսի և Կորյունի բառացի կրկնվող հատվածներում աչքի է զարնում բավական արտասովոր «ամենահեշտ լծոյն» Քրիստոսի» բառակապակցութիւնը, որն Ազաթանգեղոսի Պատմութեան մեջ հանդիպում է ևս երկու անգամ Գրիգորի յոթնօրյա վարդապետութեան մեջ—§ 72՝ «Եւ ինձ տացէ (Տէր) զամենահեշտ լուծն խոնարհութեան թեթևութեան պարգևացն, որ ոչ անցանէ՛ յաւիտեանս յաւիտենից» և § 97՝ «Եւ արդ՝ Տէր բարերար, [...] բաղցրացո՛ւ զսիրտ ամենայն մարդկան ի պաշտօն քո, զի հետզանդեսցին բնդ ամենահեշտ լծով քով և ապրեսցին ի յաւիտենից տանջանացն»:

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր հատվածների համար բնորոշ և ընդհանուր է «ամենահեշտ լուծ Քրիստոսի» արտահայտությունը, որ Ազաթանգեղոսը գործածել է երեք անգամ, իսկ Կորյունը՝ միայն մեկ: Բայց դա մեզ ոչ մի իրավունք չի տալիս եզրակացնելու, թե այդ խոսքը պատկանում է Ազաթանգեղոսին: Սուսկ այս հիման վրա որեւէ հետևություն՝ կլինեի հապճեպ և անհիմն: Որեւէ բառի կամ ոճական արտահայտության հաճախականությունը չի կարող ամենակին հիմք ծառայել դրա հեղինակին բացահայտելու կամ գործածողի առաջնությունը որոշելու համար: Բնագրաբնությամբ և բնագրերի բաղդատումով զբաղվող բանասերը պարտավոր է ավելի հուսալի միջոցներով վերահանել վիճելի հատվածների իսկական աղբյուրը:

V դ. 10-ական թվականներին Գրիգոր Լուսավորչի անունով վարդապետություն ստեղծելով, մեր առաջին թարգմանիչները՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, նրանում Լուսավորչի դավանաբանական սկզբունքները արծարծելու համար զգալի շահով օգտվել են Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի Հաճախապատում ճառերից, որի ընթացքում այդ ճառերից բավական թվով եզակի դարձվածներ ու ոճեր են անցել Լուսավորչի նորաստեղծ վարդապետությանը: Այդպիսի բազմաթիվ վկայություններից նշենք միայն մի քանիսը՝

ա) «Ձեռքն պատիծս տայցեն ի յաւիտենից տանջանսն: Որք ստեն են գրաւեալի ի ներքոյ ահաւոր սպառնալիաց արդար դատաստանին» (ՅՃԽ, Ե, էջ 43)⁸—հմմտ. Վրդպտ.՝ «Ընդ պատժով պատուհասիւմ անկեալ (մարդն) յարդարութեան դատաստանին, գրաւեցալ ի ներքոյ մահուն» (Ազաթ. § 668):

բ) «Եւ յորժամ Փրկին զառաքեալսն յաշխարհ առաքէր սերմանել զբանն ճշմարտութեան յանդս մտաց հաւատացելոց, և նովաւ ածել ի կարգ ուղղութեան, նախ զփուշն խլել զցանկութիւն բուսոցն հրամայէ, զկամս մարմնոյ և զմաաց» (ՅՃԽ, Ը, էջ 83), տե՛ս նաև «ոռոգանել զանդս մտաց» (ՅՃԽ, ԺԸ, էջ 203)—հմմտ. Վրդպտ.՝ «Արդ՝ պարտ է ձեզ կակղել զանդս մտաց ձերոց, և խլել զմեղսն զայթակղեցուցիչս յանձանց ձերոց, որ խափան առնեն արդարութեանցն ի ձեզ բուսոցն» (Ազաթ. § 522):

գ) «Իրաւանցն արդարութեան երկու բարբառք են, որ յարգեն և պատուեն զիրաւախորհսն անտեօք և պարդեօք և սպառնալեօք և պէսպէս նեղութեամբք յլատեն զապախտաւորսն և զանիրաւսն» (ՅՃԽ, Ը, էջ 89)—հմմտ. Վրդպտ.՝ «Երկու ինչ իրք պաշտեցան. մին կենաց անտիք, և միւսն արհաւիրք սպառնալեաց պատուհասից» (Ազաթ. § 678):

Նմանօրինակ ոճական նմանություններ կան նաև Ազաթանգեղոսի Պատմութեան մյուս մասերում՝

դ) «Ձի յերկրի որպէս ի ծովու ծփեցան հողմակոծեալ և մրկեալ մեղօք» (ՅՃԽ, Դ, էջ 37)—«Հողմակոծեալ ակեացն տատանելոց» (Ազաթ., Յոջբն. § 1), «Նաւեալք ընդ մէջ մրկեալ աշխարհակիր մեղացն վտանգեցան» (Յոջբն. § 10):

⁸ Սրբոյ հօռն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսավորչի Ծաճախապատում ճառք Լուսաւորք, էջմիածին, 1894:

եւ «Մերկանալ զքօսանս աշխարհիս» (335, ԺԸ, էջ 205) — «Յամենայն աշխարհակիր զքօսանաց առանձինն սահմանել» (Ագաթ. § 853):

Ասպիսի ինքնատիպ ոճերից մեկն է «ամենահեշտ լուծ Քրիստոսի» բառակապակցությունը Հաճախապատումի ԻԳ ճառից (էջ 251—252)՝ «կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ. անբիծ անարատ սուրբ սիրով հնազանդել ընդ ամենահեշտ լծովն՝ որ թեթեւ է առաքինեաց անձանց և ծանր աշխարհասիրաց՝ զորս և կոչեաց (Քրիստոս) քաղցր ձայնիւ և ասէ. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ՝ առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն զհեզութիւն, զխոնարհութիւն և զհնազանդութիւն և զամենայն արդարութիւնս, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է յաղագս յուսոյն, և բեռն իմ փոքրոգի յաղագս առաւել վարձուցն հատուցմանց»:

Քրիստոսի խոսքն այստեղ մեջ է բերված Մատթեոսի ավետարանից՝ որոշ փոփոխված հոմանիշներով և մեկնողական փոքրիկ հավելումներով՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ զտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի»⁹:

Դժվար չէ համոզվել ԻԳ ճառի հատվածից, որ «ամենահեշտ լուծ Քրիստոսի» արտահայտությունը բառադարձվել է Քրիստոսի «լուծ իմ քաղցր է» խոսքից, և բառաշրջողը Հաճախապատումի հեղինակն է կամ թարգմանիչը, և որ Հաճախապատումի «հնազանդել ընդ ամենահեշտ լծովն» արտահայտությունից են ընդօրինակված Ագաթանգեղոսի վերը բերված նույնատիպ դարձվածները՝ «զամենահեշտ լուծն խոնարհութեան» (§ 72), «հնազանդեսցի ընդ ամենահեշտ լծով քով» (§ 97, բառացի կրկնություն), և «հնազանդ լինել ամենահեշտ լծոյ ծառայութեանն Քրիստոսի» (§ 787):

Այս փաստը համոզիչ ցույց է տալիս, որ Կորյունն է եղել Ագաթանգեղոսի 787 պարբերության քաղաքողը և ոչ հակառակը, ինչպես ընդունված է կարծել:

Ք ա ռ ո զ ու թ յ ա ն Ե Ր Կ Ո Ւ ա Ր Վ Ե Ս Ս

Ագաթ. § 851

Կոր. ԻԲ

«Իսկ արդ՝ եթէ թեթեալոյն արուեստից պակասագոյն ի գիտութենէ եմ ազգք երկրածնաց, ո՞րչափ այնմ արուեստի ոք համարիցի անգիտանալ, որ ընդ աստուածախօսսն կատարի, որում երանելին Պաղոս՝ ամենեցուն տգիտանալ ասէ. վասն որոյ և զամենակեցոյց՝ Հոգին ի թիկունս հասանել անմոռնչ հեծութեամբ բարեխօս գիտէ»:

Իսկ արդ՝ եթէ թեթեալոյն արուեստից՝ պակասագոյն եմ ի գիտութենէ ազգք երկրածնացս, ո՞րչափ ևս այնմ արուեստի ոք համարեսցի և անգիտանալ՝ որ ընդ Աստուած զխօսսն կատարէ: Որով երանելին Պաղոս ամենեցուն տգիտանալ ասէ, վասն որոյ զամենակեցոյց Հոգին ի թիկունս հասանել անմոռնչ հեծութեամբ բարեխօս գիտէ»:

Հետևելով հայ բանասիրության մեջ իշխող կարծիքին և այդ կարծիքն էլ իր կողմից բազմիցս հաստատելով, Ռ. Թրմսոնը 1976 թ. Նյու-Յորքում հրատարակած Ագաթանգեղոսի անգլերեն թարգմանության մեջ, ինչպես շատ այլ հատվածների դեպքում, այստեղ ևս ծանոթագրում է՝ «այս պարբերությունը դարձյալ բառացի ընդօրինակված է Կորյունից»¹⁰:

⁹ Մատթ. ԺԱ, 28, 29:

¹⁰ Agathangelos. History of the Armenians. Translation and Commentary by R. W. Thomson, New York Press, 1976, p. 497.

Ոչ միայն Կորյունի տվյալ հատվածից, այլև ամբողջ երկրից հնարավոր չէ կռահել, թե ի՞նչ ասել է թեթևագույն արուեստ, որի մասին նվազագույն տեղեկություն ունեն երկրածին մարտիկ, ուստի Կորյունի բոլոր հայերեն կամ օտար թարգմանություններում միտքը մթին է արտահայտվում: Թեթևագույն արուեստից Ա. Տեր-Ղևոնդյանը թարգմանել է «թեթև գործեր», իսկ Մ. Աբեղյանը բառացի՝ «թեթև արվեստներ», Ռ. Թումսոնը նույնպես՝ the lightest skills (թեթևագույն արվեստներ)¹¹, առանց բացատրելու, թե ինչ պետք է հասկանալ դրա տակ: Նույնիսկ հետազոտողների մոտ որևէ մեկնաբանում այս առթիվ չի կարելի գտնել:

Ի՞նչ, արվեստներ են ակնարկում Կորյունը և Ազաթանգեղոսը, այս հարցին մեզ հիմնավոր տեղեկություն է տալիս միայն Ազաթանգեղոսի երկրորդ գիրքը՝ Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունը:

Նոր կտակարանում Քրիստոսն ու առաքյալներն աստվածային ճշմարտությունը քարոզում են երկաստիճան արվեստով՝ թեթևագույն և բարձրագույն: Թեթևագույն էր կոչվում այն արվեստը, երբ ամենամատչելի խոսքով, առակով կամ բժշկությամբ նրանք ժողովրդին քարոզում էին նոր հավատը և մերժում կռապաշտության սովորությունները, իսկ աստվածային ճշմարտությանը հասու, հավատի մեջ խորացած կատարյալներին վարդապետում էին բարձրագույն արվեստով: Ինչպես Սուրբ Գրքում, այնպես էլ Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ նշանակալից տեղ են գրավում առական ու այլաբանությունը՝ քարոզվող ճշմարտությունը լսողներին դուրամատչելի դարձնելու համար: Հովհաննու ավետարանում (ԺԶ, 25) Քրիստոսն ասում է աշակերտներին. «Ձայս առակով խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակով խօսեցայց ընդ ձեզ, այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ»:

Պողոս առաքյալը քարոզության այդ երկու ձևերը պատկերավոր համեմատում է կաթով և հաստատուն (պինդ) կերակրով սնելու հետ—կաթով սնում են մանուկներին (տղայոց)՝ իբրև տգետների և մարմնավորների, իսկ հաստատուն (պինդ) կերակրուր, այն է՝ իմաստությունը, տալիս են շափահասներին ու կատարելության հասածներին, այն է՝ հոգևորներին՝ «Եւ եղերուք կարօտք կաթին, եւ ոչ հաստատուն կերակրոյ: Զի ամենայն՝ որ կաթնկեր է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է. այլ կատարելոցն է հաստատուն կերակրոյ» (ԾԲԲ. 12—14, հմմտ. Ա. Կորնթ. Գ. 1—2):

Գործք առաքելոցի մեկնության մեջ Հովհան Ոսկեբերանը Քրիստոսի և առաքյալների քարոզության երկու աստիճաններն անվանում է խոնարհագույն և բարձրագույն վարդապետություն¹²:

Հետևելով նոր կտակարանի հրահանգներին, ինչպես և Ոսկեբերանի մեկնությանը, Գրիգոր Լուսավորչի Վարդապետության հեղինակը նույնպես սահմանում է քարոզության երկու աստիճան՝ թեթևագույն և բարձրագույն արվեստ: Անտարակույս, քարոզչական արվեստի այդ երկու ձևերին ենք պարտական, որ Վարդապետության վրա զգալի կնիք են թողել թե՛ առակախոսությունը և թե՛ բարձր ճարտասանական ոճը:

Բերենք քարոզության թեթևագույն և բարձրագույն արվեստի մի քանի օրինակ Վարդապետությունից և Դարձ փրկության գրքից, որով քարոզում են հաջորդաբար մարգարեները, Քրիստոսը, առաքյալները և նրանց հաջորդած Գրիգոր Լուսավորիչը:

ա) Մարգարեների թեթևագույն և բարձրագույն քարոզը.—ինչ որ մեծ Մովսեսը շատ առաջ հոգու շնորհներով (ապագա) լինելիօր մասին առակախոսել էր, նույնը հետո եկած մարգարեները հոգեպատում բարբառով կրկնեցին՝ «Ձոր մեծին Մովսիսի յառաջագոյն շնորհօք Հոգւոյն զլինելոցն առա-

¹¹ Նույն տեղում. էջ 337:

¹² Յ ո վ հ ա ն Ո ս կ Ե ր ա ն, Մեկնություն Գործոց առաքելոց, Վենետիկ, 1839, էջ 16 և 59:

կախօսեալ էր՝ զնոյն հոգեպատում բարբառով և զկնի եկելոց մարգարէիցն երկրորդեալ» (§ 701):

բ) Քրիստոսի թեթեւագույն և բարձրագույն քարոզը.—Քրիստոս ոչ թե սկզբից ևեթ բարձրագույն և անհասանելի բաներ որոտաց, այլ նախ խոնարհագույն և առակավոր խոսքերով և ախտահալած բժշկութեամբ իրեն մերձավոր դարձրեց և իմաստնացրեց, որոնց և ասում էր. «Եթե երկրայինը ձեզ ասացի, և չեք հավատում, էլ ինչպե՞ս կհավատաք, եթե ձեզ երկնայինը ասեմ»՝ «Քանզի և ինքն Քրիստոս ոչ անդէն ի սկզբանն գրաւագույնս և զանհասագույնս որոտաց, այլ նախ խոնարհագույն և առակախօս բանիւք և ախտահալած բժշկութեամբ մերձաւորս արարեալ և իմաստնացուցեալ. ցորս և աթէր. «Թէ զերկրաւորս ասացի ձեզ, և ոչ հաւատայք, զի՞արդ եթէ զերկնաւորսն ասացիք ձեզ՝ հաւատայցէք» (Ագաթ. § 698): Դրանից հետո (միայն Քրիստոս) իբրև կառարյալներ ի համարձակագույն և բարձրագույն ճշմարիտը վարդապետեց՝ «ապա յետ այնորիկ, իբրև կառարեւոյց՝ համարձակագույն և բարձրագույն ճշմարիտն վարդապետեալ» (Ագաթ. § 698):

գ) Առաքյալների թեթեւագույն և բարձրագույն քարոզը.—Բայց (առաքյալները) ոչ թե տեղնուտեղը հանկարծակի հոգու զորութեամբ նորընծաներին անսովոր մեծամեծ (բաների) էին մղում, այլ նախ թեթեւագույն (ամենամատչելի) կերպով, աշխարհական կարգով առակաբանում և արվեստախոսում էին: Որի համար էլ Պողոս առաքյալը հայտարարում էր, թե «կաթով սնեցի ձեզ ի Քրիստոս և ոչ հաստատուն կերակրով, քանի որ հասու չէիք»¹³: «Բայց (առաքեալքն) ոչ անդէն և անգ յանկարծաթափ ըստ Հոգւոյն զօրութեան՝ զնորընծայսն յանդերձակաւ մեծամեծսն ձգտեցուցանէին. այլ նախ թեթեւագույն ըստ աշխարհակիր կարգաց առակաբանեալ և արուեստախօսեալ: Վասն որոյ և յայտ արարեալ Պաւղոսի, եթէ «կաթն չամբեցի ձեզ ի Քրիստոս, և ոչ հաստատուն կերակուր. քանզի չէիք բաւական» (Ագաթ. § 696): Քարոզութեան այս արվեստին առաքյալները տեղեկացել էին ամենափրկիչ Քրիստոսից և նույն կամեցում էին գործում բարբարոսական կողմերում՝ Ալլ նոթա (առաքեալքն) տեղեկացեալ իսկ էին արուեստի փառագութեան յամենափրկչէն Քրիստոսէ (. . .): Նովին կանոնաւ և առաքեալքն ի բարբարոսական կողմանսն գործէին» (Ագաթ. § 698): Որի համար և սյունհողոսի (ժողովի) հրամանով առաքյալները իրենց մոտեցած նախածանոթ հեթանոսներին թեթեւագույն բաներն էին ավանդում և հեռացնում նախ կուռքերի կերակուրներից և պոռնկութիւնից և մեռելոտից ու արյունից՝ «Վասն որոյ և սյունհողոսական հրամանաւ առաքելոցն նախածանաթ մատուցելոցն հեթանոսաց գրեթեագույնսն աւանդեալ, և որոշեալ նախ ի կերակրոց կոռցն և ի պոռնկութեանէ և ի մեռելոտոյ և յարենէ» (Ագաթ. § 699): Քանզի իրենք առաքյալները՝ նրա՝ (Քրիստոսի) ճշմարտութեան վկանները Ավետարանից և մարգարեական գրքերից քաղելով՝ ծաղկեցրին հոգեպատում և առակախօս թղթեր... Մանավանդ երբ տեսան ժողովարանների (եկեղեցիների) հասունացումը, այնուհետև առավելագույնս զորացրին իրենց խոսքը՝ «Քանզի և առաքելոցն իսկ, վկայիցն նորին ճշմարտութեան, առեալ ի սուրբ Աւետարանէ և ի մարգարէական գրոց՝ թուղթս հոգեպատումս և առակախօսս»¹⁴ ծաղկեցուցեալ... մանաւանդ հայեցեալ ևս ի կառարումն եկեղեցեացն՝ յաճախէին այնուհետև զառաւելագույնսն բարբառելով» (Ագաթ. § 700):

դ) Ս. Գրիգորի թեթեւագույն և բարձրագույն քարոզը.—Բայց առաքյալները ոչ միայն իրենք էին քարոզում թեթեւագույն և բարձրագույն արվեստով, այլև իրենց աշակերտներին էին պատվիրում, որ մշտապես պահեն քարոզութեան այդ կանոնները՝ «Զի կանոնք մշտնջենակարգք աշակերտելոցն պահիցին» (§ 700): Ուստի միանգամայն բնական է, որ

¹³ Ա. Կորնթ. 3, 2:

¹⁴ Բուրբ. ձեռագրերը և տպագրւածքն ունեն այստեղ առաւելախօսս, որ ուղղում եմ առակախօսս. հմտ.՝ առակախօս բանիւք (§ 698) և առակախօսեալ (§ 701): Հոգեպատումս և առակախօսս հակադրված են իրար:

հայ ժողովրդին լուսավորելիս Ս. Գրիգորը ևս ընդօրինակում ու գործի է դնում քարոզության այս երկու աստիճանները, որի համար բազմաթիվ օրինակներ է տալիս Ազաթանգեղոսի Պատմության երրորդ գիրքը՝ «Դարձ փրկության աշխարհիս Հայաստան»:

Ազաթանգեղոսի վկայությամբ, երկաստիճան արվեստով է Ս. Գրիգորը հորինել իր հաճախադույն (հաճախապատում) ճառերը, գործի դնելով թե բարձրագույն վարդապետությունը և թե դյուրալու առակը, որպեսզի դժվարապատում ճառերը միաժամանակ հեշտընկալ և դյուրահաս լինեն տիմարագույնների և մարմնական գործերով զբաղվողների համար՝ «Ապա յետ այնպիսի զործոց դարձեալ առաւել բարձրագոյն վարդապետութեամբ սկսեալ երանելոյն Գրիգորի հառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորիմացս դիւրալուս բաւմադիմիս շնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց [...]: Յորս բաղում նմանութիւնս և օրինակս յանցաւորաց աստի, առավել վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն յերկրեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք տիմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին...» (Ազաթ. § 886):

Ամբողջ 886 պարբերությունը, շնչին բացառությամբ, բառացի առկա է նաև Կորյունի «Վարք Մաշտոցի»-ում (հատված Ի), որով և հաճախագույն (հաճախապատում) ճառերը վերագրվում են Մաշտոցին: Ազաթանգեղոսի մոտ կա և ի սկզբանե եղել է ճառաս հաճախագույնս դժուարապատումս և ճառակս խորիմացս դիւրալուս» հակադրությունը, որովհետև նրա խնդիրն է եղել ցույց տալ, որ հաճախագույն ճառերը հորինվել են միաժամանակ բարձրագույն վարդապետությամբ և թեթևագույն արվեստով: Մինչդեռ Կորյունն այդպիսի խնդիր չի ունեցել, ուստի «դարձագույն վարդապետութեան» կողքին հարմար չի նկատել «առակս խորիմացս դիւրալուս» և ջնջել հանել է դրանք իր բնագրից:

Ուստի կասկած չի մնում, որ այդ տողերի գրողը նույն անձն է, որը Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ պատմում է Քրիստոսի առակախոսության և բարձրագույն վարդապետության, առաքյալների ծաղկեցրած հոգեպատում և առակախոս թղթերի մասին:

Քանի որ Վարդապետությունից արդեն գիտենք, թե ինչ ասել է քարոզչության թեթևագույն և բարձրագույն արվեստ, ապա մեզ համար միանգամայն հասկանալի է դառնում, երբ Ազաթանգեղոսը, պատմելով Ս. Գրիգորի անապատական միայնակեցության մասին, վերստին անդրադառնում է թեթևագույն արվեստ արտահայտությանը:

Իր բոլոր նախորդ բացատրություններով և Վարդապետության վկայություններով Ազաթանգեղոսը մեզ նախապատրաստել է հասկանալու Գրիգոր Լուսավորչի քարոզչության երկու աստիճանները՝ թեթևագույն և բարձրագույն արվեստները, ինչը Կորյունին և իր ժամանակակիցներին քաջ հայտնի էր Լուսավորչի Վարդապետությունից: Բայց այս ամենը չկա Կորյունի մոտ, և երբ այսօրվա ընթերցողը կարդում է Մաշտոցի Վարքում՝ «Իսկ արդ եթէ թեթևագոյն արուեստից՝ պակասագոյն են ի գիտութենէ ազգք երկրածնացս» և այլն, ապա առանց Ազաթանգեղոսի օգնության նրան մնում է միայն զուլիս կոտրել «թեթևագոյն (...) պակասագոյն» բառեղծվածի վրա:

Կորյունը ստուգապատում հեղինակ է: Չնայած նշված բանաբաղումներին, Կորյունը ստուգապատում հեղինակ է, ինչպես ինքն է ասում իր մասին վերջաբանում՝ «ոչ սուտապատում ճարտարախօս», քանի որ Ազաթանգեղոսից օգտվում է որոշակի վերապահումներով—նա բաց է թողնում գրանցում եղած պատմական տեղեկությունները, ճշնոթյան աշխարհագրական վայրերը, մարգարեների անունները, որոնց հետ Ազաթանգեղոսը համեմատում է Գրիգոր Լուսավորչին և որևէ անգամ դրանք չի հարմարեցնում կամ վերագրում Մաշտոցին: Այսպես, § 845-ից Կորյունը վերցրել է միայն սկիզբը՝ Գրիգոր Լուսավորչի ձեռքով շեն ու անշեն տեղերում վանականների բազում և անհամար գնդեր (խմբեր) հաստատելը (Կոր. ԻԲ), որովհետև Մաշտոցն ինքն էլ նորաստեղծ հայոց դպրությունը տարածելիս՝ Գողթնում, Սյունիքում և այլուր

հիմնել էր վանական դասեր (Կոր. ԺԳ, ԺԴ), և բաց է թողել պարբերության մնացած մասը, որտեղ Աղաթանգեղոսը, հայտնելով քրմերի որդիներին Ս. Գրիգորի ձեռքի տակ կրթելու և հոգևոր խնամքով սնուցանելու մասին, թվարկում է նրանցից ձեռնադրված տասներկու եպիսկոպոսներին:

Եվ ընդհակառակն, § 846-ից Կորյունը բաց է թողել միայն սկիզբը՝ Աղաթանոսին արքունի դռան եպիսկոպոս կարգելու վերաբերյալ, իսկ պարբերության շարունակությունը՝ ինչպես Ս. Գրիգորը լեռներում ճգնության էր վարժեցնում մենաստաններից հավաքած աշակերտներին, կցել է § 845-ի սկզբին: Արդյունքում ստացվել է՝ «Եվ դարձեալ բազում և անհամար գունդս վանականաց ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր: Զորս ընդ ժամանակս իւրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր. առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն և երթեալ լեռնակեաց, սորամուտ ծակախիթ եղեալ՝ զառօրէական զկերակուրն խոտաբուտ ճաշակօքն վճարէին: Եւ այնպէս վշտակեաց տկարութեան զանձինս տային» (Կոր. ԻԲ):

§ 848-ից Կորյունը շնչել հանել է Գրիգոր Լուսավորչի ճգնության վայրը ցույց տվող բառերը՝ «յակունս Եփրատական գետոյն», որտեղ և գտնվում էր Լուսավորչի «Մանեայ այրք» կոչված վերջին հանգրվանը: Կորյունը իր բնագրից փչել է նաև § 848-ում հիշատակված Ծղիա Մեծ մարգարեի և երանյալ Հովհաննես Մկրտչի անունները, որոնց հետ Աղաթանգեղոսը համեմատում է ճգնավոր Գրիգորին (Կոր. ԻԲ): Այսինքն, Կորյունը գիտակցաբար հրաժարվում է Գրիգոր Լուսավորչի գործունեությանը և ժամանակին վերաբերող բոլոր կոնկրետ փաստերից և դրանցից ոչինչ միտումնավոր կամ ինքնաբերաբար չի հարմարեցնում Մաշտոցին, նրան վերագրելով միայն վարքագրական և կրոնաքարոզչական բնույթի այն քաղումները, որոնք բնորոշ են առհասարակ հոգևոր առաջնորդներին:

Բացառություն է կազմում Հաճախագույն ճառերի խնդիրը (Ագաթ. § 886, Կոր. Ի), որոնք բանասիրության մեջ նույնացվում են Հաճախապատում ճառերի հետ: Հաճախապատումը («Հաճախապատում ճառք յուսաւորք») Գրիգոր Լուսավորչի գործն է և գրվել է IV դարում, հունարեն. թարգմանվել է Մաշտոցի ձեռքով և իր ամբողջ հայեցի բառուբանով կապված է եղել նրա անվան հետ, որը և իրավունք է տվել Կորյունին այդ երկը Մաշտոցինը համարելու:

Այս բոլորի դիմաց միայն մի տեղ՝ Աղաթանգեղոսից քաղած § 843-ի սկզբում Կորյունն ավելացրել է Մաշտոցի Լուսավորչական գործունեության հետ կապված վայրերը՝ «Եւ այնպէս յամենայն կողմանս Հայոց, վրաց և Աղաթանից զամենայն ժամանակս կենաց իւրոց [...] զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց» (ԻԱ): Առհասարակ, ամբողջ Մաշտոցի Վարքի քննությունը ցույց է տալիս, թե Կորյունը որքան զգույշ է վարվում Աղաթանգեղոսից քաղած նյութի հետ՝ թույլ չտալով պատմական-իրական փաստերի աղավաղում կամ անհիմն վերագրում, որի հետևանքով Ս. Գրիգորին վերաբերող կոնկրետ փաստերը կարող էին փոխանցվել Մաշտոցին: Բառացի բանաբաղումները կատարվել են սոսկ ընդհանուր վարքագրական կանոնների և կրոնաքարոզչական դատողությունների սահմաններում, ինչպես Կորյունն է ասում նախաբանում՝ վարդապետական ծովի համատարած ալիքներով հաշողակ և ուղիղ նավելու համար՝ «զի կամակարագոյնս և ուղղագոյնս նաւիցեմք զհամատարած ալիօքն վարդապետական ծովուն»:

Այս ամենը լուրջ երաշխիք է ծառայում, որ Կորյունն իրոք ստուգապատում հեղինակ է, և նրա նշած բոլոր պատմական անցքերը՝ Դանիելյան նշանագրերի Հայաստան բերվելը, որ ոմանք Կորյունի ստեղծած առասպելն են համարում, Հայոց, Վրաց և Աղվանից նշանագրերի ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով և դրա հետ կապված մյուս դեպքերը միանգամայն վավերական են և հավաստի, քանզի Աղաթանգեղոսը վկա է, որ Կորյունը ոչ մի կողմնակի պատմական դեպք կամ եղելություն անհիմն կերպով Մաշտոցին չի վերագրում:

Ագաթանգեղոսի Պատմության գրության ժամանակը և հեղինակի հարցը: Վերը բաղդատված կորյուն-ագաթանգեղյան նույնաբան հատվածները և դրանց քննությունը երևան են հանում պատմաժամանակագրական մի իրողություն, որն արմատապես փոխում է մինչ այժմ եղած պատկերացումները V դ. մատենագրության ժամանակագրական դասակարգման մասին: Ագաթանգեղոսի Պատմությունը գրվել է ոչ թե 461—465 թթ., ինչպես կարծում են Ստ. Մալխասյանցը և ուրիշներ, այլ ավելի վաղ, քան Մաշտոցի Վարքը, որ Կորյունը դրել է 40-ական թվերի վերջին: Հին վրացերեն «Վասն հաւատոյ»-ը բնագրի քննության հիման վրա ես ցույց եմ տվել, որ Ագաթանգեղոսի արդեն պատրաստի Պատմությունը՝ եզրափակիչ քսան հավատամքներով որոշ խմբագրման է ենթարկվել 431 թվի Եփեսոսի տիեզերական ժողովից հետո Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ձեռքով՝ Կոստանդնուպոլսի Պրոկղ արքեպիսկոպոսից ստացած թղթի ազդեցությամբ¹⁵, Պրոկղն իր թղթի մեջ՝ Προ; Α'ρμενιος περὶ πίστεως (Հայերին հավատի մասին) ոչ միայն հորդորում է՝ «այլ պահեսչի՞ք դուք զվարդապետութիւն, զոր ընկալեալ ի հարցն սրբոց որ ի Նիկիա սինհոդոսն էր ժողովոյն»¹⁶, այլև Կոստանդնուպոլսից վերադարձող թարգմանիչների ձեռքով ուղարկած է եղել Նիկիական հավատո հանգանակը (այս հաստատում է նաև Կորյունը)¹⁷։ Եվսագր Պոնտացու մեկնությամբ հանդերձ։

Այդ է պապացուցում Եվագրի մեկնության հատվածների առկայությունը միաժամանակ Սահակի և Մաշտոցի առ Պրոկղ պատասխան թղթում՝ գրված 435 թվին, Ագաթանգեղոսում և հին վրացերեն «Վասն հաւատոյ»-ում, որ պետք է դիտել իբրև հայ եկեղեցու առաջնորդների պաշտոնական արձագանք՝ Եփեսոսի ժողովի ընդունած որոշումներին։ Այստեղից դժվար չէ հավաստիանալ, որ Եվագրի մեկնության թարգմանությունը հունարենից հայերեն և հայերենից վրացերեն և այդ մեկնության ոգով հիշյալ երկերի խմբագրումները կատարվել են 435—438 թթ.։ Նշանակում է հին վրացերեն դավանաբանական գրվածքը, որի մեջ մուծվել է Եվագրի մեկնության հայերեն թարգմանությունից մի ընդարձակ հատված, գրված է եղել 425—435 թվերի միջև՝ Ագաթանգեղոսի քսան եզրափակիչ հավատամքների և մյուս մասերից քաղած վկայությունների հիման վրա, որպես Գրիգոր Լուսավորչի հանգանակ հավատի մասին և ուղիղ դավանություն՝ վրաց եկեղեցու համար¹⁸։ Հետագա դարերում, երբ վրաց եկեղեցին քաղկեդոնականությանը հարելով, անջատվեց հայ լուսավորչական եկեղեցուց, այդ հանգանակը միտումնավոր վերագրվեց Հիպոդիտոսին։

Բարեբախտաբար, ձեռքի տակ ունենք նաև այլ կովաններ, որոնց օգնությամբ ավելի ևս ճշգրտվում են Ագաթանգեղոսի Պատմության գրության ժամանակը և հեղինակի հարցը։ Սահակ Պարթևի «Գիր աւանդութեան» հրահանգի և 426 թ. ազգային եկեղեցական ժողովում հաստատված Սահակ Պարթևի կանոնների լեզվաոճական հարուստ նյութի ուսումնասիրությունը կրկին ու կրկին մեղ բերում է այն համոզման, որ դրանք շարագրված են Ագաթանգեղոսի Պատմության Առաջարանի, Ա և Գ գրքերի ազդեցությամբ։ Ահա մասիկ։

ա) «Անդ էր այնուհետև սրտալիր յուրախութիւն, [...] Բանգի (ի ձեռն Գրիգորիոսի) յԱյրարատեան գավառին, ի թագաւորանեան կայեանսն, բղխե-

¹⁵ Ա. Մուշեղյան, Ագաթանգեղոսի Հայոց Պատմությունը և հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը (Լրարեր հասարակական գիտությունների, 1987, № 4, էջ 74)։

¹⁶ Գրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 3։ J. D. Mansi. Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. 5. Graz-Austria, 1960, col. 436.

¹⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, հատված ԺԲ, էջ 76։

¹⁸ Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 66, 68—69։

ցին Հայոց տանն Քորգումայ շնորհք քարոզողթեան Աւետարանին» (Ագաթ. § 775—776) — «Քանզի սուրբ Լուսաւորին Հայոց Մեծն Գրիգորիոս ծնեալ վերստին ղՀայաստանեա(յ)ցս աշխարհ աւազանին ծննդեամբ, [...] և լինէր ուխտախօսին այնուհետեւ և խնդութիւն մեծ յաշխարհիս Հայոց տանն Քորգումայ» («Գիր աւանդ. էջ 127»)¹⁹: Երկուսն էլ միատեսակ են նկարագրում նորամուտ քրիստոնեութեան առաջ բերած խանդավառութիւնը Հայաստանում:

բ) «Բայց ոմն ի նոցանէ (Հռիփսիմեանց) ունէր արուեստ ապակագործութեան՝ առնել ուրունս ապակեղէնս, և տալ զինս ընդ կերակրոյ աւուրն պարենի ոռնկի» (Ագաթ. § 150) — քրմերի որդիք ասում են Տրդատ թագավորին և Գր. Լուսավորին՝ «և ոչ ունիմ արուեստս գործականութեան հնարից ինչ առ ի պատրաստել նոֆօ գպարէն ոռնկաց մեզ և որդւոց մերոց» («Գիր աւանդ», էջ 129):

գ) «Ի բռնութենէ հարկապահանջ իշխանացն» (Ագաթ. Յոգն. § 6) — «Ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց» (Կանոն ԼԸ, էջ 395)²⁰,

դ) «Եւ անդէն (Գրիգորիոս) բարձր քաղաքումով փակեալ զտեղին ի պատիւ (ապագա էջմիածնի Մայր տաճարը — Ա. Մ.)» (Ագաթ. § 770), «աւլ (Գրիգորիոս) լոկ պարսպէր քաղաքումով զտեղիսն (եկեղեցեաց)» (Ագաթ. § 782) — հետեւելով Ս. Գրիգորին, Սահակ Պարթև կաթողիկոսը սահմանում է՝ «զտաճարս աղածթիցն [...] պարսպեալ եղիցի քաղաքումով (տպ. քաղաք որմովք)» (Կանոն Բ, էջ 368):

ե) Տրդատ թագավորը հրաման է տալիս՝ «բազմութիւն մատաղ մանկտոյ ածել յարուեստ գպրութեան, [...] դումարել յսրժանատու տեղիս դասս դասս» (Ագաթ. § 840) — ըստ այսմ Սահակ Պարթևը հրահանգում է՝ «Վասն որոյ եւ անհատ պարտի պահել յարդարուն գպրացսն ի վանս և յալլ արժանատու տեղիս» (Կանոն Ժ, էջ 372):

զ) «Եւ զիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց (Գրիգորիոս) ի տօն մեծ հոշակի [...] Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելւոյն Յովնանու և սրբոյ վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեացեն» (Ագաթ. § 836) — «Տան սրբոյն Յովնանու Մկրտչի և վկայի (Աթանագինէի — Ա. Մ.), զոր նախապարգեաց առաքեալն և խոստովանողն Քրիստոսի [...] Գրիգորիոս՝ ի վանս, զի ուխտադրութեան պահաւ հաստատեցաւ» (Կանոն Խ, էջ 397): Ագաթանգեղոսում կա ոչ միայն այս տոնի սահմանումը, այլև հիշատակութիւնն առիտադրութեան պահք»-ի մասին, երբ Գրիգորիոսը, Հովհաննես Մկրտչի և Աթանագինես վկայի նշխարները նոր հիմնած եկեղեցում ամփոփելով, յոթ օր դադար առաւ հոգևոր մխիթարութեան համար Եփրատ գետի ափին, որտեղ մկրտում էր հայ ժողովրդին (Ագաթ. § 835), ճիշտ ինչպես Եզեկիել մարգարեն յոթ օր դադար առաւ Քոբար գետի ափին (Եզեկ. Գ. 15): Սահակ Պարթևը առիտադրութեան պահք»-ով, ըստ իս, ակնարկում է Ագաթանգեղոսում Ս. Գրիգորի հենց այս յոթնօրյա դադարը «վասն հոգևոր մխիթարութեան», որից հետո էլ հաստատվեց բերված սրբերի հիշատակի տոնը: Ուխտադրութեան համաձայնաբար աղավաղված է մխիթարութեան բառից. սրա փկայութիւնն է՝ նաև երկու բառերի մեջ հավասար թվով հնչյունների շարքում «խ» և «ր» տառերի զուգադիպումը, որի պատճառով դժվարութեան ձեռագրում հնարավոր է այդպիսի տարբերություն: Հունարեն Ագաթանգեղոսը ևս այստեղ ունի «մխիթարութիւն»՝ παρὰ χλίαν²¹:

¹⁹ Գիր աւանդութեան Սրբոյն Սահակայ յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ... (Սոփերք Հայկականք, հ. Բ, Վենետիկ, 1853):

²⁰ Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Երևան, 1964):

²¹ La version grecque ancienne du livre Arménien d'Agathange edit ou critique par l'auteur, Louvain, 1973, p. 320, § 149

Այս համեմատությունները կարելի է շարունակել, բայց բերվածն էլ բավական է՝ հստակ հետևության հանգեցնել համար: Սահակ Պարթևի «Գիրք աւանդութեան» հրահանգում և կանոններում հանդիպում ենք ոչ միայն Ագաթանգեղոսին հատուկ ոճերի ու դարձվածքների կրկնության, այլև այնպիսի պատմական փաստերի, որոնք պարզապես Ագաթանգեղոսի Պատմության բովանդակային ատաղձի բեկորներն են: Այնպիսի տպավորություն է ստացվում, որ այդ կանոնները շարադրվել են Ագաթանգեղոսի Պատմությունն ընթերցելուց հետո կամ, որ ավելի հավանական է, այդ երկու գործերը միևնույն հեղինակի գրչի արգասիքն են: Ես հակված եմ այս երկրորդ ենթադրությանը: Սահակ Պարթևն է Ագաթանգեղոսի Պատմության Ա և Գ գրքերի հեղինակը, որոնք միասին կազմում են Գրիգոր Լուսավորչի վարքը և պետք է գրված լինեն 405—425 թվերին, իսկ Ագաթանգեղոսի Բ գիրքը՝ Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունը, ստեղծվել է հայոց գրերի գյուտից (405) ոչ շատ անց:

Ագաթանգեղոսի վկայությունը, թե Գրիգոր Լուսավորչը վաթսուհինգ օր շարունակ Վարդապետությունը քարոզում էր Վաղարշապատում հավաքված ժողովրդին, երևան է հանում այն իրողությունը, որ նրա հեղինակը կամ հեղինակները Վարդապետությունը մտահղացել են իբրև վաթսուհինգ կանոնական գրքերից բաղկացած Հին և Նոր կտակարանների համառոտ շարադրանք, իբրև առձեռն Աստվածաշունչ՝ նոր գիր ու դպրություն ստացած հայ ժողովրդի մեջ քրիստոնեական ուսմունքը լայնորեն քարոզելու և դպրոցներում ուսուցանելու համար:

Ըստ Աստվածաշնչի լատին թարգմանիչ Հիերոնիմոսի²² (վախճանվել է 420 թ.), եբրայական կտակարանը բաժանվում էր 22 գրքերի՝ եբրայական այբուբենի նշանագրերի թվին համապատասխան, որոնցով և համարակալված էին գրքերը: Իրենց հերթին 22 գրքերը պարունակում էին, ըստ Հիերոնիմոսի, 39 կանոնական գործ. դրանք են—Մովսեսի հինգ գիրք՝ Արարածք (Մենդեք), Ելք, Ղևտականք, Թիւք, Երկրորդումն օրինաց. Երկրորդ գումարութիւն՝ Եսուայ որդւոյ Նաւեայ, Դատաւորաց, Հռոմթ, Առաջին և Երկրորդ թագաւորութեանց (Սամուելի), Երրորդ և Չորրորդ Թագաւորութեանց, Եսայի, Երեմիա՝ հանդերձ Ողբովքն, Եղեկիէլ, Երկոտասան մարգարէք. Երրորդ գումարութիւն (Սրբագիրք)՝ Յովբ, Սաղմոսք Դաւթի, Առակաց²³, Եկղեսիաստէս (Ժողովող), Օրհնութիւն օրհնութեանց (Երգ երգոց), Դանիէլ, Պատմութիւն ժամանակական (Գիրք Մնացորդաց—առաջին և երկրորդ), Եզր(աս) (առաջին և երկրորդ), Եսթեր:

Ըստ Կյուրեղ Երուսաղեմացու (315—386. Երուսաղեմի եպիսկոպոսն էր 351 թվականից)՝ Հին կտակարանի Յոթանասնից հունարեն թարգմանությունը ևս բաղկացած էր 22 գրքից և պարունակում էր 40 գործ. վերը թվարկածին նա ավելացնում է՝ Բարուքայ թուղթը²⁴, Հայոց կանոնագրքի վաղ շրջանի վկայություններում ևս երկու անգամ բերվում է Հին կտակարանի կանոնը՝ «Կանոնք յետ առաքելոց հարանց հետևողաց» (հոգված Իէ)²⁵ և «Կանոնք Լաւորիկեայ» (հոգված ՄԵ), որը համապատասխանում է հունարեն բնագրի 59 և 60 հոգվածներին²⁶:

²² Յ երոնիմայ վասն ի քսան եւ յերկուս գիրս առ ի Հեբրայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ, գերմաներէն-հայերէն ներածութեամբ եւ հայ-լատին բնագրով հրատարակեց Արիստակէս Վարդանեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1820, էջ 58—76:

²³ Կյուրեղ Երուսաղեմացու բերած ցանկում πνευμα (առակք) հայը թարգմանել է գգօնութիւն: S. Cyrillus Hierosolymitanus archiepiscopus, catechesis quarta. Παρ. τω Θειω γρηγόρι. Migne, Patrol. graec. T. 33, col. 500. Եբանեւայն Կիւրգի Երոսաստղեմայ հայրապետի կողմէն ընծայութեան՝ վասն գրոց սրբոց, Վիեննա, 1832, էջ 70:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Կանոնագիրք հայոց, հ. Ա, Երևան, 1964, էջ 112:

²⁶ Նույն տեղում, էջ 240—242:

Հիերոնիմոսի ցանկի համեմատ վերջին երկու ցանկերում պակասում են Ողբք Երեմիայի և Եսթեր,—հավանաբար փոքրածավալ Ողբք—ը հաջորդել է Երեմիայի մարգարեությանը որպես նրա մասը, այս պատճառով էլ առանձին չի հիշատակվել, իսկ Եսթեր—ի փոխարեն հաճախ հետևողաց ցանկում ավելացվել են Մակարեացիի և Սիրաք, իսկ Հավոդիկեի ցանկում՝ Մակարայեցիի: Հսա այսմ, Հավոդիկեի 364 թվի եկեղեցական յոդովը ևս կանոնեալ է ճանաչում Հին կտակարանի 39 գործ, ներառյալ և Ողբք Երեմիայի:

Նոր կտակարանը, ըստ Կյուրեղ Երուսաղեմացու և Հավոդիկեի ժողովի, պարունակում էր 26 անուն գործ՝ 4 Ավետարան, Գործք առաքելոց, առաքյալների 7 կաթողիկե (գլխավոր) թղթերը և Պողոս առաքյալի 14 թղթերը²⁷, այսինքն՝ ներկայիս ամբողջ Նոր կտակարանը՝ առանց Հովհաննու Հալոտնության: Նշանակում է, Աղաթանգեղոսը նկատի է ունեցել Հին կտակարանի 39 և Նոր կտակարանի 26 անուն գործ, որոնց գումարն էլ հենց կազմում է 65: Մեր այս ենթադրության օգտին է խոսում Մովսես Կաղանկատավացու խորհրդանշական վկայությունը, թե Սուրբ Երուսաղեմի Գյուլտ խաչի կոչված կաթողիկե եկեղեցին վերևում և ներքևում ունեւր վաթսուն և հինգ սյուն (Բ, ծա)²⁸:

Ըստ Խորենացու, Քսաներկու հայտնությունները և Նոր կտակարանը հայերեն է փոխադրել Մեսրոպը իր երկու աշակերտների հետ միասին, դեռևս Ասորիքում եղած ժամանակ: Քրիստոս և գերկու յայտնիսն (կարդա՝ յայտնութիւնսն—Ա. Մ.)²⁹ և զՆոր կտակս յեղու (Մեսրոպ) ի հայ բան» (Խոր. Գ. ծգ): Սա էլ հենց այն համառոտված Աստվածաշունչն է, որ Աղաթանգեղոսի Պատմության մեջ կոչված է Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունը³⁰:

Խորենացու հաղորդածը՝ Աստվածաշունչը հայերեն համառոտելու մասին հարևան վկայություններով գտնում ենք թե՛ Աղաթանգեղոսի և թե՛ Կորյունի մոտ: «Դարձ փրկութեան» գրքի հեղինակը՝ Սահակ Պարթևը, ցույց տալու համար, որ Ս. Գրիգորը Վարդապետությունը համառոտել է Աստվածաշունչից, գրում է. «Որպէս զՄովսէս, որ յանկարծ ուրեմն օրէնստեսոց հերբ յայական բանակին լինէր, ամենայն մարգարէական դասուն, և կամ իրրկ զյառաջադէմն Պաղոս բովանդակ առաքելական գնդան, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանան Քրիստոսի՝ սոյնպէս և սա (Գրիգորիոս) եկեալ հասեալ երևեալ՝ հայաբարբառ հայերէնախօս գտաւ» (§ 854): Իսկ Կորյունն էլ, քաղելով այս պարբերությունը և աչքի առաջ ունենալով նույն Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունը, այսինքն՝ հայերեն համառոտ Աստվածաշունչը, այդ գործը վերագրում է երկու հավասարյալներին (գուգակիցներին)՝ Սահակին ու Մաշտոցին (Կոր. ԺԱ): Սակայն Սահակ Պարթևի և Կորյունի միջև հակասություն չկա—ինչպես որ Ս. Գրիգորը բոլոր մարգարեներին, առաքյալներին ու Քրիստոսի ավետարանը բանավոր խոսեցրեց հայերեն՝ Վաղարշապատում հավաքված ժողովրդի առաջ, այդպես էլ երկու գուգակիցները՝ Սահակն ու Մաշտոցը, նույնը հայերեն գրավոր շարադրեցին նորաստեղծ գրերով:

27 Երանելուն Կիրիլի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, էջ 70—71: Կանոնք Լուդիկեայ (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 241—242):

28 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 283: Մի ձեռագիր ունի՝ վաթսուն և ինն:

29 Յայտնիսն զրչի աղավաղած հապավումն է—յայտնութիւնսն—յայտնութիւնսն—յայտնութիւնսն ընդունում Հին կտակարանի քսաներկու կանոնական գրքերը: Սրան հակառակ, Կյուրեղի հայ թարգմանիչը ոչ-կանոնական (հ.ն. ապոկրիֆ) անվանում է ծածկոյթ յայտնութեանց կամ ծածուկ յայտնութիւն՝ «Մի ինչ փոյթ առնել զծածկոյթ յայտնութեանց: Զի և թէ այն՝ որ յայտնապէսն է, ըզիտես, դի՞ զվտարանդնօքն տագնապեալ տառապիցիսս, «յայտնացանէ զքսան և դերկու գիրսն ընթերիչի՛ր ալ ի ծածուկ յայտնութիւնսն ամենկին մերձեցիս մի» (Երանելուն Կիրիլի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, էջ 68, 69—70):

30 Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 67—68:

Այսպիսով, հորենացին Վարդապետության հեղինակ է ճանաչում միայն Մաշտոցին, իսկ Կորյունը՝ Սահակին և Մաշտոցին։ Միայն այսպես պետք է հասկանալ Կորյունի Հին և Նոր կտակարանները «յանկարժ ուրեմն» (հանկարժակի) հայախոս դարձնելը։ Եվ դա տեղի է ունեցել ըստ հորենացու՝ Ասորիքում, իսկ ըստ Կորյունի՝ նորաստեղծ գրերը Հայաստան բերվելուց ոչ շատ սնց։ Որից հետո Կորյունը գրում է. «Իսկ իբրև զչափ առնալ զիրացն հաստատութեանս» (այսինքն, երբ իրերի հաստատությունը՝ նորաստեղծ հայերեն գրերը փորձով ստուգեցին), արդեն ավելի համարձակ էին (Սահակն ու Մաշտոցը) աշակերտներ ժողովում նոր ուսման համար (Կոր. ԺԲ)։ Մ. Աբեղյանը և ուրիշներ Կորյունի խոսքն քննադատել են իբրև Հին ու Նոր կտակարանների լիակատար հայերեն թարգմանություն Սահակի և Մաշտոցի ձեռքով։ Անհնար է պատկերացնել, որ բերված նորաստեղծ նշանագրերը ինչպես հարկն է գործնականում շատագլած, Սահակն ու Մաշտոցը ձեռնարկեին և ավարտեին Աստվածաշնչի լիակատար հայերեն թարգմանությունը, որն ինքնին երկար տարիների տքնաշան աշխատանք էր պահանջում։ Իրականում, ինչպես տեսանք, հորենացու և Կորյունի խոսքը Աստվածաշնչի համառոտ շարադրման մասին է, որ է՝ Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունը, իսկ Աստվածաշնչի ամբողջական հայերեն թարգմանության հարցին Կորյունը և հորենացին անդրադառնում են ավելի ուշ, և երկուսն էլ այն վերադրում են միայն Սահակ կաթողիկոսին (Կոր. ԺԲ, հոր., Գ, ԺԳ)։

Գրիգոր Լուսավորչի Վարդապետության դավանաբանական դրույթների հիմքի վրա են շարադրվել Ազաթանգեղոսի Ա գրքում Գրիգորի յոթնօրյա վարդապետությունը և ամբողջ Գ գրքում Գրիգոր Լուսավորչի քարոզչական վարդապետական և առաքելական գործունեությունը, իսկ Ա գրքից Վարդապետության մեջ են մուծվել Հովհաննիսյանց կույսերի գալստյան և Վաղարշապատում նահատակվելու վերաբերյալ մի շարք ակնարկներ ու հիշատակություններ (սկսած § 513-ից)։

Վարդապետությունն ունեցել է կանոնական հավատամատյանի արժեք, որից օգտվել են, հարկ եղած ժամանակ, Պե իրենք՝ Սահակն ու Մաշտոցը և թե նրանց երիցագույն ու՝ կրտսեր աշակերտները։ Կոստանդնուպոլսի պատրիարք Պրոկղին հղած Սահակի և Մաշտոցի պատասխան թղթի երկրորդ մասը զգալի չափով շարադրված է Վարդապետությունից քաղած բանաձևերով։

Եզնիկ Կողբացին ևս պատկանում է V դ. այն մատենագիրների թվին (Կորյուն, Եղիշե, Հովհ. Մանդակունի և այլք), որոնք իրենց երկերում Գր. Լուսավորչի անունը երբեք չեն հիշատակում։ Ըստ Ստ. Մալխասյանցի դրույթի, դա նշան է այն բանի, որ Ազաթանգեղոսի Պատմությունը և Գր. Լուսավորչի Վարդապետությունը դրվել են «Եղծ աղանդոց»-ից հետո։ Իրականում, ոչ միայն Կորյունը, այլև Սահակ Պաթթևի աշակերտներից Եզնիկ Կողբացին ևս օգտվել է մեծ չափով Գր. Լուսավորչի Վարդապետության թե՛ դավանաբանական հիմունքներից և թե՛ շարադրման ոճերից, որոնք առանձին ուսումնասիրության նյութ են կազմում։ «Եղծ աղանդոց»-ում մեր նշմարած բազմաթիվ փոխառություններից բերենք միայն երկու բնորոշ նմուշ։

Եզնիկը գրում է՝ «Եւ երբէք, երբէք գրէ թէ (Աստուած) մարդացեալ իսկ՝ բերան ի բերան և ձեռն ի ձեռն ընդ բարեկամին իւրում ընդ Մովսեսի խօսէր» (Ա. Իգ)։ Գր. Լուսավորչի Վարդապետության այն մասում, որտեղ խոսվում է Աստծո մարդակերպ երևալու մասին, կարդում ենք՝ «Թէպէտ ձեռն ի ձեռն և բերան ի բերան յանդիմանախօս ընդ Աստուծոյ ճանաչէր Մովսէս՝ սակայն ճշմարիտ դեղոյն փռթալոյ հասանել» (Ազաթ., § 331)։ Ցույց տալու համար, թե Աստված շատ մտերմիկ է խոսել Մովսես մարգարեի հետ, Եզնիկը պարզապես կրկնել է Վարդապետության պատկերավոր խոսքը, որտեղ Աստծո և Մովսեսի մտերմությունն արտահայտված է ձեռք ձեռքի և գլուխ գլխի զրուցելու ձևով։ Մինչդեռ բուն Աստվածաշնչում կարդում ենք՝ «Եւ խօսէր Տէր ընդ Մովսէսի դէմ յանդիման, որպէս ոք զի խօսիցի ընդ բարեկամի իւրում»⁸¹։

⁸¹ Եզն., ԼԳ, 111.

«Բերան ի բերան խօսեմ» դարձվածն ամբողջ Աստվածաշնչում հանդիպում է միայն Երեմիայի մարգարետության մեջ և այն էլ Հուդայի Սեդեկիա արքայի և Բաբելոնի թագավորի վերաբերյալ:

Եվս մի փաստ. հիմք ընդունելով, որ Մովսես մարգարեն (իմա՝ Մենդոց գիրքը) միայն երկու երկինք գիտե՝ վերին և ներքին, Եզնիկը համոզված հայտարարում է, թե Պողոս առաքյալը հափշտակվեց (տարվեց) ոչ թե մինչև Երբոդ երկինք, ինչպես Մարկիոնը և մյուս հերձվածողներն են կարծում. այլ երկնի բազում մասերից երրորդ մասը՝ «ի մասն ինչ երրորդ ի բազում մասանց երկնի յափշտակեցաւ Պաղոսս» (Պ. է.): Այստեղ ևս Եզնիկը հենվում է ոչ թե հայերեն նոր կտակարանի Կորնթացիացի երկրորդ թղթի վրա, որտեղից առնված է Պողոսի վկայությունը (ԺԲ, 2), այլ նորից Գրիգոր Լուսավորչի վարդապետության, որի § 709-ում բերված է Պողոսի սույն խոսքը՝ «Եթէ մարմնով և թէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ. բայց համարձեալ յԵրբոդ մասն երկնից և ի դրախտն»: Այստեղ վարդապետությունը հետևել է նոր կտակարանի ասորի թարգմանությանը, որը նույնպես ունի՝ «Մինչև յԵրբոդ մասն երկնի»⁸²,—հանգամանք, որ ինքնին հաստատում է, թե վարդապետությունը ստեղծվել է նախքան 431 թվի Եփեսոսի ժողովը, քանզի Ս. Գրքի հունարեն ստույգ օրինակից թարգմանելու դեպքում վարդապետությունն էլ հայերեն նոր կտակարանի նման կունենար յԵրբոդ երկնից, այլ ոչ թե այս վիճելի խնդրում բառացի կհետևեր ասորուն:

Եթե Եզնիկն էլ օգտված լիներ ասորի նոր կտակարանից, ապա տեղնուտեղը կհիշեր իր աղբյուրը, ինչպես որ այս նույն հարցի կապակցությամբ մեջ է բերում ասորի Հին կտակարանը՝ հաստատելու համար, թե ասորերենում «երկինք» բառը միայն հոգնակի թիվ ունի: Դրա փոխարեն Եզնիկն այստեղ վկայակոչում է իր համար նվազ նպաստավոր հունարեն բնագիրը, թեև ինքն էլ խոստովանում է, թե հույն լեզվում այդ արտահայտությունը (ἑὸς τριτοῦ οὐρανοῦ) երկակի իմաստով է հասկացվում: Համեմատության համար ասենք, որ հունարենից թարգմանված լատին նոր կտակարանը Մարկիոնի նման ունի «մինչև երրորդ երկինք»: Նշանակում է, այստեղ ևս Եզնիկի աղբյուրը, իրոք, Գրիգոր Լուսավորչի վարդապետությունն է: Նման օրինակներ էլի կարելի է բերել:

Ես չեի ասի, թե տվյալ դեպքում «Եդծ աղանգոց»-ը շարադրելիս Եզնիկն անպայման բացել է վարդապետությունը և բառացի արտագրել այսինչ տեղը: Խնդիրն ավելի պարզ է՝ քանի որ վարդապետությունը որպես Լուսավորչի ուսմունք դասավանդվում էր դպրոցներում, ապա այդ դպրոցներից դուրս եկած մեր մատենագիրները այնքան լավ գիտեին վարդապետությունը, որ նույնիսկ աստվածաշնչային իրողությունների մասին խոսելիս՝ բառացի գործածում էին ազաթանգեղյան ձևակերպումները: Իսկ ո՞վ կարող էր լինել վարդապետության հեղինակը, որի քաջիմացությունը, հակառակ ամեն բանի, այդպես վրստահում է մեծ փիլիսոփա. Եզնիկ Կողբացին, եթե ոչ Մեսրոպ Մաշտոցը միայնակ կամ Սահակ Պարթևի հետ միասին:

Այսքանից հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ Կորյունն էլ Եզնիկի նման «վարք Մաշտոցի»-ի նախաբանում Նոյի և ջրհեղեղի մասին պատմում է ոչ թե ըստ Աստվածաշնչի (Մենդ. է, Ը), այլ ըստ վարդապետության նկարագրածի, որտեղից էլ ընդօրինակել է ջրհեղեղը պատկերող եզակի ոճեր՝ «միւս ոմն (Նոյ) բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն հանդերձ՝ ամենայն շնչականօք տարելոր ժամանակօք նաւկաց պահեալ» (Կոր. հատ. Բ)—համտ, Ագաթ. § 296՝ «մի ոմն (Նոյ) արդար գտեալ յարդարացեալ տոհմէն, [...] Հրաման առեալ յԱստուծոյ առնել տապան արկղագործ փայտիւմ [...] Որոյ խոստացեալ այնուհետև առնուլ գնոյ ընտանեօքն հանդերձ և ամենայն շնչականօքն ի տա-

⁸² Մեկնություն չորեքասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ. աշխատասիրութեամբ Տկ. Հ. Գաբրիելի Աթոռակալ վարդապետի Աւետիքեան, հ. 2, Վենետիկ, 1811, էջ 263:

պաւնն, և ամենապա՛հ ձեռամբն փակեալ զստպաւնն: [...] հանդերձ հոսանօրն արձակելովք յերկնից, հեղեղասաստ ծովապատիժ (ուղղում եմ ըստ 'Կորյունի' «արձակելով յերկնից հեղեղս, աստուածապատիժ—Ա. Մ.»⁸³, բարկութեամբ զառ ի ներքուս երկնից ջնջեալ, առ հասարակ ողողեալ սրբեաց»:

Աստուածապատիժ Բարկութիւն բառակապակցութիւնը մի քանի անգամ հանդիպում է Ոսկեբերանի՝ ծայրի մարգարեի մեկնութեան մեջ⁸⁴, որտեղ հայ թարգմանիչը աստուածապատիժ ինքնաստեղծ ածականը գործածել է հուն. ὁ ἐπὶ τοῦ οὐρανοῦ-ի դիմաց, որը բառացի նշանակում է «աստուածառաք, Աստծո ուղարկած (բարկութիւն)»:

Ամփոփենք: Մեր ուսումնասիրությունից բխող գլխավոր եզրակացությունն այն է, որ հայոց ազգային պատմագրությունը սկիզբ է առնում ոչ թե 460-ական թվերից, այլ շորս տասնամյակ դարանից առաջ—Ազաթանգեղոսի Պատմությունն է հայոց ազգային պատմագրության երախայրիքը: Դա էլ հենց հայոց ազգային եկեղեցու այն կանոնական խմբագրությունն է, որն անցած ժամանակների քան մեկուկես հազարամյակի ընթացքում կրել է նվազագույն փոփոխություն:

Հայագիտության մեջ մինչ այսօր տիրապետող տեսակետը, իբր Ազաթանգեղոսի Պատմության խմբագրողը կամ հեղինակն է եղել Մաշտոցի վարդից քաղագրողը, փաստորեն գլխավոր է շրջում պատմա-ժամանակագրական իրողությունը: Այս տեսակետին հակված հետազոտողներն իրենք իրենց հարց չեն տվել, թե V դ. 60-ական թվերին, երբ հայ դպրության ասպարեզի վրա պատմագրական և մատենագրական բեղուն գործունեություն էին ծավալում Եղիշեն, Փավստոս Բուզանդի Հայոց պատմության հայ հեղինակը, Մովսես խորենացին և այլք. ինչպե՞ս կարող էր այդ նշանավոր պատմիչների աչքի առաջ Տրդատ թագավորի քարտուղարի անունով ստեղծված մի շինծու պատմություն հանկարծ ձեռք բերել այնպիսի հնագույն պատմական հիշատակարանի հոշակ, ինչպիսին ընդունում է խորենացին «աջող» և «բաջ» քարտուղար Ազաթանգեղոսի գործը, եթե այն իրոք շարադրված լիներ Սահակի կամ Մաշտոցի կրտսերագույն աշակերտներից մեկի ձեռքով:

83 Արձակելով հեղեղս կապակցության նման Ազաթանգեղոսն ունի § 347-ում՝ «արձակեալ աշուճետն ի ներքս դօրէննս իրրև զհեղեղստ սաստիկ՝ շիջուցանել զայն (հոր ինչ մոլեկան հրդեհի համատարած)», որով նույնանս ակնարկւմ է համաշխարհային ջրհեղեղը Հմմտ. նաև § 301՝ «իջուցեալ կրակարեռ անձրևս, և աստուածասաստ թարկութեամբն համառոտ դատեալ: «Հեղեղասաստ ծովապատիժ» Ա. Տէր-Ղևոնդա՛ն ա խարհաբար թարգմանութեան մեջ թողել է անփոփոխ ՀԱ գ ա թ ա ն ղ ե ղ ո ս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 169). Հեղեղասաստ ալլուր Ազաթանգեղոսի և այլ հեղինակների մոտ ալլևս չի հանդիպում: Իսկ ծովապատիժ բարեկութիւն Ազաթանգեղոսից ընդօրինակել է միայն Ղևոնդ պատմիչը՝ ըստ փարաւոնեան դօրուն ղծովապատիժ թարկութիւն կրեցին» (Պատմութիւն Ղ ե ո ն դ ե ա յ մ ե ծ ի վ ա ռ դ ա պ ե տ ի : ա յ ո յ, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. Ի, էջ 110): Նշանակում է, աղավաղումը կատարվել է նախքան VIII դարը—պատկանելի հնություն:

84 Յովհ. Ոսկեբերանի Մեկնութիւն ծայրեայ մարգարէի, Վենետիկ, 1880. տե՛ս նոր Բաղդիրք Հայկազեան լեզուի (հ. Ա., Վենետիկ, 1836, էջ 328)՝ «բարկութիւնք աստուածապատիժ, և արհաւիրք յերկնիցս. «Անտի առնուցուն ի միտ եթէ աստուածապատիժ է բարկութիւն». «Էի յատ լիչի՛ թէ աստուածապատիժք են ցաւքն»:

КОРЮН ИЛИ АГАФАНГЕЛ?
ТЕКСТОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ В НОВОМ АСПЕКТЕ

А. В. МУСЕГЯН

Р е з ю м е

История Агафангела и Житие Маштоца Корюна—два известных памятника древнеармянской литературы 5-го века—отображают два великих просветительских движения в Армении: распространение христианства Григорием Просветителем в начале 4-го века и создание армянской письменности Месропом Маштоцем в начале 5-го века. Помимо того, эти литературные памятники тесно переплетены меж собой многочисленными, буквально повторяющимися пассажами, обнаруженными с давних пор в обоих текстах, которые создают некую общую для них текстуальную ткань. Начиная, в основном, с немецкого востоковеда Альфреда Гутшмида (*Alfred [von] Gutschmid, Agatangelos, Leipzig 1877*), первоисточником названных тождественных пассажей исследователи признают Житие Маштоца Корюна на том основании, что эти отрывки более подходят Корюну и лучше связаны с предыдущим и последующим изложением его текста. На этой основе и арменоведами определяется дата написания истории Агафангела. Поскольку Корюн написал Житие Маштоца в 40-х годах 5-го века, то из этого следует, что пользовавшийся его трудом Агафангел написал свою историю во второй половине 5-го века, а именно в 461—465 гг.

Однако благодаря совершенно новому подходу в сравнительных текстологических изысканиях, еще в начале 80-х годов, автор настоящей публикации пришел к заключению, что первоисточником указанных тождественных пассажей является История Агафангела. Причем, первая и третья книги Истории, составляющие житие Григория Просветителя, были написаны Сааком католиком в 405—425 гг., а вторая книга—Учение Григория Просветителя, согласно М. Хоренаци, написана еще раньше, в начале 410-х годов Месропом Маштоцем, а поданным Корюна,—совместно обоими сподвижниками. Ученик Маштоца Корюн на основании и наподобие жития Григория Просветителя создал житие второго просветителя Армении, пользуясь отчасти готовыми его тирадами религиозно-панегирического содержания.